ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

թիվ 21-Լ

ԻՐԱՎԱՍՏԵՂԾ, ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Իրավաստեղծ, իրավական և կազմակերպչական աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 270-Լ որոշման 15-րդ կետով, 19-րդ կետի 1-ին, 2-րդ և 20-րդ ենթակետերով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կառուցվածքային ստորաբաժանումների, Նախարարությանը ենթակա պետական մարմինների և դրանց կառուցվածքային ստորաբաժանումների, ինչպես նաև Նախարարությանը ենթակա կազմակերպությունների, հիմնարկների, Նախարարության գրասենյակի (այսուհետ՝ Ստորաբաժանումներ) ղեկավարներին՝

1) իրավական պարզաբանում (խորհրդատվություն) ստանալու անհրաժեշտության դեպքում Նախարարության իրավաբանական վարչություն (այսուհետ՝ Իրավաբանական վարչություն) ներկայացնել պաշտոնական գրություն՝ հստակ և սպառիչ նկարագրելով

իրավական հիմնախնդիրը՝ նշելով և բավարար չափով հիմնավորելով իրավական նորմերի հակասությունը, ինչպես նաև գրությամբ ներկայացնել սեփական փաստարկված դիրքորոշումը հիմնախնդրի լուծման վերաբերյալ,

2) Ստորաբաժանումների մասնագիտական գործունեության ոլորտին առնչվող հարցերով, ըստ անհրաժեշտության կամ ի կատարումն հանձնարարականի, հանդես գալ համապատասխան իրավական ակտ մշակելու նախաձեռնությամբ, իրականացնել նախագծի ներքին շրջանառությունը և Իրավաբանական վարչություն ներկայացնել իրավական ակտի նախագիծը՝ կցելով հիմնավորումը, ֆինանսական եզրակացությունը և ներքին շրջանառության արդյունքում ստացված կարծիքների լիարժեք բովանդակային ամփոփումն արտացոլող ամփոփաթերթը,

3) Ստորաբաժանումների մասնագիտական գործունեության ոլորտի իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ Իրավաբանական վարչությունից ստացված կարծիքներն ամփոփել լիարժեք և հիմնավորված կերպով՝ հաշվի առնելով տվյալ ոլորտում առկա արդի առանցքային հիմնախնդիրները և ամփոփման արդյունքները սահմանված ժամկետներում ներկայացնել Իրավաբանական վարչություն,

4) Նախարարության կողմից կնքվող և Ստորաբաժանումների կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով իրենց վերապահված խնդիրներին կամ գործառույթներին անմիջականորեն առնչվող քաղաքացիաիրավական պայմանագրերի նախագծերն անհրաժեշտության դեպքում ներկայացնել Իրավաբանական վարչություն՝ իրավական փորձաքննության, իսկ Իրավաբանական վարչության կողմից Ստորաբաժանումներին ներկայացված իրավական փորձաքննության արդյունքներն ամփոփել ինքնուրույն,

5) իրավական ակտերի նախագծերի համատեղ մշակման աշխատանքների կատարման դեպքում սահմանված ժամկետում, համակատարող Ստորաբաժանումների կողմից իրենց իրավասությանը վերապահված հարցերի շրջանակներում, առաջին կատարող նշված Ստորաբաժանմանը ներկայացնել համապատասխան նախագիծ և հիմնավորում,

6) անհատական բնույթի իրավական ակտերի նախագծերը չներկայացնել Իրավաբանական վարչություն՝ իրավական փորձաքննության կամ իրավական դիրքորոշում ստանալու նպատակով, իսկ ներքին (լոկալ) բնույթի իրավական ակտերի նախագծերը ներկայացնել Իրավաբանական վարչություն՝ միայն կարծիք ստանալու նպատակով,

7) Ստորաբաժանումների մասնագիտական գործունեության ոլորտին վերաբերող հարցերով ստացված հարցումներին և գրություններին պատասխանել ինքնուրույն՝

անհրաժեշտության դեպքում ստանալով շահագրգիռ Ստորաբաժանումների դիրքորոշումները,

8) Ստորաբաժանումների մասնագիտական գործունեության ոլորտին վերաբերող հարցերով աշխատանքային և պաշտոնական քննարկումներին ապահովել համապատասխան Ստորաբաժանման ներկայացուցչի մասնակցությունը, իսկ անհրաժեշտության դեպքում, հիմնավոր գրության հիման վրա, ներգրավել շահագրգիռ Ստորաբաժանման այլ ներկայացուցչի,

9) ստացված գրություններին պատասխանել պաշտոնական գրությամբ, իսկ գրությունն աշխատանքային կարգով ներկայացնել միայն հրատապությունից ելնելով՝ հնարավոր սեղմ ժամկետում ապահովելով նաև պաշտոնական գրության ներկայացումը,

10) Ստորաբաժանումների կողմից իրենց կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով իրենց վերապահված խնդիրների լուծմանը կամ գործառույթների իրականացմանը չներգրավել Իրավաբանական վարչության ծառայողներին (աշխատողներին), բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի (այսուհետ՝ Նախարար) կամ Նախարարի իրավական ապահովման ոլորտը համակարգող տեղակալի կողմից հանձնարարվելու դեպքերի,

11) Ստորաբաժանումներին կամ դրանց մասնագիտական գործունեության ոլորտներին առնչվող անհատական բնույթի իրավական ակտերը համապատասխան պաշտոնատար անձի ստորագրման ներկայացնել ինքնուրույն, իսկ Նախարարի անհատական բնույթի իրավական ակտերը՝ Նախարարի համապատասխան ոլորտը համակարգող տեղակալի կամ Նախարարության գլխավոր քարտուղարի միջոցով:

2. Իրավաբանական վարչության պետին՝

1) ընթացք տալ միայն սույն հրամանով նախատեսված պահանջների պահպանմամբ ներկայացված նախագծերին և գրություններին,

2) իրավական պարզաբանում (խորհրդատվություն) չտրամադրել՝

ա. եթե չեն պահպանվել սույն հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված իրավական պարզաբանում (խորհրդատվություն) ստանալու համար ներկայացվող պահանջները, ինչպես նաև՝ այն դեպքերում, երբ իրավական հիմնախնդիրն անմիջականորեն առնչվում է տվյալ Ստորաբաժանման գործառույթներին և չի պարունակում իրավական նորմերի հակասություն,

բ. եթե նույնաբովանդակ իրավական հիմնախնդրի կապակցությամբ արդեն իսկ տրվել է իրավական պարզաբանում (խորհրդատվություն):

3. Մինչև Նախարարության իրավաբանական վարչության կազմավորումը «Նախարարության իրավաբանական վարչություն» բառերը կարդալ «Նախարարության ոստիկանության իրավաբանական վարչություն»:

4. Հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը հանձնարարել Նախարարի տեղակալներին և Նախարարության գլխավոր քարտուղարին՝ յուրաքանչյուրին իր համակարգման ոլորտներով:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ **Ա. ՍԱՐԳՍՅԱՆ**

«21» 07 2023թ.

ք. Երևան